

ՍԱՂՄՈՍ 17

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Պաշտպանության աղոթք հարստահարիչների դեմ	Վերջնական փրկության համար վստահությամբ աղոթք	Անձնական թշնամիներից փրկության աղոթք (Ողբ)	Անմեղ մարդու աղոթք	Անմեղի աղերսը
<u>MT ներածություն</u> «Դավթի աղոթքը»				
17:1-5	17:1-2 17:3-5	17:1-2 17:3-5	17:1-2 17:3-5	17:1-2 17:3-4ա 17:4բ-7
17:6-12	17:6-9 17:10-12	17:6-7 17:8-12	17:6-7 17:8-9ա 17:9բ-12	17:8-12
17:13-15	17:13-14 17:15	17:13-14 17:15	17:13-14 17:15	17:13-14բ 17:14գ-15

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 17:1-5

¹Ո՛վ ՏԵՐ, լսի՛ր արդարությունը, ունկնդրի՛ր իմ աղաղակը:

Ականջ դիր աղոթքիս, *որ* կեղծ շուրթերից չէ:

²Թող Քո ներկայությունից գա իմ դատավճիռը,

Քո աչքերը թող տեսնեն ուղիղը:

³Գու փորձեցիր իմ սիրտը,

Գիշերվա մեջ այցելեցիր ինձ,

Ինձ փորձեցիր ու ոչինչ չգտար.

Մտադրվել եմ, որ իմ բերանն օրինազանց չլինի:

⁴Նայելով մարդկանց գործերին՝ Քո շուրթերի խոսքերով

Ես գգուշացա կործանիչի ճանապարհներից:

⁵Պահի՛ր իմ ընթացքը Քո ճամփաների մեջ,

Ողբեսոգի քայլերս չզայթեն:

17:1 Ուշադրություն դարձրեք զուգահեռ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԻՆ, որոնք վերաբերում են սաղմոսերգուի աղոթքին՝

1. լսի՛ր – BDB 1033, KB 1570, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 17:6, 27:7, 28:2, 30:10, 39:12, 54:2, 61:1, 64:1, 84:8, 102:1, 119:149, 130:2, 143:1:
2. ունկնդրի՛ր – BDB 904, KB 1151, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 5:2, 55:2, 61:1, 86:6, 142:6
3. ակա՛նջ դիր – BDB 23, KB 27, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, տես՝ Սաղմ. 5:1, 39:12, 49:1, 54:2, 55:1, 77:1, 80:1, 84:8, 140:6, 141:1, 143:1

Սաղմոսները Աստուծուց իր ժողովրդի կողմից խնդրանքների գիրք է, որ լսի իրենց (այսինքն՝ որ նկատի և պատասխանի) կարիքները:

Սաղմ. 17:1-ում արդար խնդրանքով մարդու խոսքերը (BDB 841) հակադրվում է «կեղծ շուրթերով» անձի խոսքերի հետ (տես՝ Ես. 29:13):

Սաղմոս 17:1 զուգահեռ է 17:6-ին: Այս Սաղմոսի բոլոր երեք պարբերությունները սկսվում են մի քանի ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐՈՎ՝ աղերսելով Աստուծուն, որ գործի սաղմոսերգուի համար:

NASB, NKJV	«կեղծ շուրթերից չեն»
NRSV, NJB	«կեղծավորությունից գերծ շուրթերից են»
TEV	«ազնիվ աղոթք»
JPSOA	«առանց նենգության»

Սաղմոսերգուն հաստատում է իր կատարելությունը: Նա աղոթում է առանց ծածուկ շարժառիթների կամ հայտնի ստությունների (տես՝ Ես. 29:13):

17:2 Ինչպես որ համար մեկն ունի երեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, այս համարն էլ ունի երկու հասկանալի ՀԱՅՏԱԿԱՆՆԵՐ:

1. թող Քո ներկայությունից գա իմ դատավճիռը/վրեժխնդրությունը – BDB 422, KB 425, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՏԱԿԱՆ իմաստով:
2. թող Քո աչքերը տեսնեն ուղիղը – BDB 302, KB 301, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ՀԱՅՏԱԿԱՆ իմաստով

NASB	«արդարություն»
NKJV	«ուղիղ»
NRSV	«ճիշտը»
NJB, TEV,	
JPSOA, REB	«ճիշտ»
LXX	«շիտակություն»

MT տալիս է «հավասարություն», «ուղղամտություն» կամ «արդարություն» (BDB 449): Այստեղ այն վերաբերում է ՅԱՀՎԵԻ ազնիվ կամ անաչառ դատին: Սաղմոսերգուն խնդրում է արդարության Աստծուն ցույց տալ արդար վրեժխնդրություն (տես՝ Սաղմ. 17:1ա):

17:3-5 Սաղմոսերգուն թվարկում է, թե ինչու Աստված պետք է դատի/վրեժխնդիր լինի իր համար:

1. Ինչ է արել Աստված (բոլոր ԿԱՏԱՐՅԱԼ)
ա. Նա փորձել է իր սիրտը, Սաղմ. 17:3ա
բ. Նա այցելել է իրեն գիշերով, Սաղմ. 17:3բ (ա և բ գուգահեռներ են՝ ոչ մի հատուկ տարբերությամբ)
գ. Նա քննել է իրեն և ոչինչ չի գտել, Սաղմ. 17:3գ (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՍԱ. ԱՍՏՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ):
2. ինչ է նա արել կամ չի արել
ա. նա չի մեղանչել իր բերանով, Սաղմ. 17:3դ
բ. նա հեռու է մնացել բռնավորների ճանապարհից (այս բառը՝ BDB 829, նշանակում է «հափշտակող», տես՝ Երեմ. 7:11, սակայն կարող է նշանակել «բռնավոր», տես՝ Եզեկ. 18:10), Սաղմ. 17:4
գ. նա քայլել է Աստծո ճանապարհներով, Սաղմ. 17:5ա
դ. նա չի սայթաքել, Սաղմ. 17:5բ (տես՝ Սաղմ. 18:36)
«Ճանապարհներ» հասկացությունը նշանակում է, որ սաղմոսերգուն զգուշությամբ հետևել է Աստծո ուխտի կանոններին (տես՝ Սաղմ. 37:31, 40:2, 44:18, 66:9, 73:2, 119:105, Առակ. 14:15):

Ամբարիշտ մարդիկ՝

1. շեղվում են ճանապարհից աջ կամ ձախ
2. գայթակղվում են ճանապարհի վրա
3. ունեն սայթաքուն քայլեր

Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՍԱ. ԱՍՏՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

17:3դ *UBS Տեքստային Նախագիծը* (էջ՝ 182-183) ունի համառոտ հետաքրքիր գրառում պոեզիայի այս տողի թարգմանության տարբերակների շուրջ:

«Եթե Դժ թառը թարգմանվում է որպես անորոշ կազմության և «մի» նախածանցով, ապա Սաղմ. 17:3-ի վերջին մասը պետք է թարգմանվի որպես «իմ ծրագրերը» (մտքերը) իմ բերանից շատ ավելին դուրս չեն գալիս» (այսինքն՝ իմ մտքերը համապատասխանում են իմ խոսքերի հետ, իմ բառերը հաստատում են իմ գաղափարները): Եթե Դժ թառը թարգմանվում է որպես առաջին դեմքի եզակի թվով բայ, ապա նախադասության այս հատվածը պետք է թարգմանվի որպես «եթե ես խորհեմ /ինչ-որ բան/ (այսինքն՝ ինչ-որ չար բան), /սա/ չպետք է փակի իմ բերանը»:

Նաև տես՝ NIDOTTE, հատոր 1, էջ՝ 1112, միևնույն առաջարկված շտկման համար: MT-ից առաջարկվող փոփոխությունը՝ «օրինական լինելը» (BDB 273, KB 273) փոխելու «ես խորհել եմ» կամ «ես ծրագրել եմ» (BDB 273, KB 273, *Qal* ԿԱՏԱՐՅԱԼ) պարունակում է միայն ձայնավորների փոփոխություն:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 17:6-12

⁶Ես Քեզ կանչեցի, քանի որ լսելու ես ինձ, ո՛վ Աստված:

⁷Դեպի ինձ խոնարհեցրո՛ւ ականջդ, *լսի՛ր* իմ խոսքը:

⁸Ցո՛ւյց տուր Քո սքանչելի գթասիրությունը,

Դու, որ Քեզ հուսացողներին Քո աջ ձեռքով ես փրկում

Իրենց հակառակորդներից:

⁹Աչքի բիբի պես պահպանի՛ր ինձ,

Ծածկի՛ր ինձ Քո թևերի հովանիով՝

¹⁰Ինձ ճնշող ամբարիշտներից, իմ մահացու թշնամիներից,

Որոնք պաշարել են ինձ:

¹¹Իրենց ճարպով քողարկվել են,

Իրենց բերանով ամբարտավան խոսքեր են ասում:

¹¹Հիմա մեր քայլերի մեջ չորս կողմով պատել են մեզ,
 Աչքները մեզ վրա են տնկել, որ գետնին զարկեն:
¹²Այն առյուծի պես, որ գիշատել է ուզում,
 Առյուծի կորյունի պես, որ դարանակայել է:

17:6-12 Այս պարբերությունը բացատրում է Աստծո գործողությունները սաղմուսերգուի և նրա հակառակորդների գործողությունների հանդեպ:

1. Աստծո գործողությունները՝
 - ա. նա կանչեց և Աստված պատասխանեց՝ Սաղմ. 17:6
 - բ. Աստված ցույց տվեց Իր ուխտի սերը և հավատարմությունը (այսինքն՝ գթասիրություն, տես՝ Հատուկ Թեմա. Բարեգթություն):
 - գ. Աստված նրան ապաստան տվեց (տես՝ Սաղմ. 5:11-ի գրառումը)
 - դ. Աստված պահեց՝ պաշտպանեց «իմ աչքի բիրը» (անձի՝ հատկապես մտերիմ մեկի հանդեպ նուրբ հոգատարություն ցուցաբերելու դարձվածք, տես՝ 2 Օր. 32:10, Առակ. 7:2):
 - ե. Աստված ծածկեց նրան Իր թևերի հովանիով (տես՝ Հատուկ Թեմա. ՄՏՎԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ և ՀՈԳԱՇՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ)
2. հակառակորդների գործողությունները
 - ա. նրանք ճնշել են նրան (այսինքն՝ սպանել), Սաղմ. 17:9
 - բ. պաշարել են նրան, Սաղմ. 17:9բ, 11ա
 - գ. նրանք փակել են իրենց սիրտը (բառացի՝ «իրենց ճարպով /BDB 316/ քողարկվել են» /BDB 688, KB 742, *Qal* կատարյալ/», տես՝ LXX «ճարպ» կիրառվում է մարդկանց համար բացասական իմաստով Սաղմ. 73:4-ում և 119:70-ում):
 - դ. նրանք հպարտությամբ են խոսում նրա դեմ
 - ե. նրանք իրենց աչքերը նրա վրա են տնկում
 - զ. նրանք առյուծի պես գիշատել են ուզում նրան, Սաղմ. 17:12

Ինչպիսի՜ սուր հակադրություն:

17:6

NASB, NKJV

TEV, NJB,

JPSOA

«խոնարհեցրու Քո ականջը դեպի ինձ»

«քո ականջը ինձ դարձրու»

Այս երբայերեն դարձվածքը, որը երբ գործածվում է աղոթքների մեջ, խնդրում է ՅԱՀՎԵԻՆ դառնալու՝ թեքվելու (տես՝ 4 Թագ. 19:16, Եսայի 37:17, Դան. 9:18, Սաղմ. 31:2, 71:2, 86:1, 88:2, 102:2, 116:2):

ՅԱՀՎԵՆ՝ չնայած որ ոչ նյութեղեն հոգևոր էակ է, նկարագրվում է մարդկային բառապաշարով: Տես՝ Հատուկ Թեմա. Աստված նկարագրված որպես մարդ (անտրոպոմորֆիզմ): Մարդիկ ունեն չունեն այլ բառապաշար, այլ միայն այն ինչ կապված է այս մոլորակի և իրենց ֆիզիկականի հետ: Մարդկային բառապաշարը, որը գործածվում է Աստծո կամ հոգևոր տիրույթի մասին, միշտ փոխաբերական է:

17:7 Այս համարն ունի մի շարք հզոր, հուզական աստվածաբանական տերմիններ, որոնք կապված են ՅԱՀՎԵԻ անձի և ողորմության հետ:

1. ցույց տուր սքանչելի – BDB 811, KB 930, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (տես՝ դրան առնչվող բառ Սաղմոս 33:22-ում՝ BDB 810, տես՝ Հատուկ Թեմա. Սքանչելի բաներ):
2. գթասիրությունը, ՅԱՀՎԵԻ *hesed* –ը – BDB 338 (տես՝ Հատուկ Թեմա. Բարեգթություն), որը մատնացույց է անում Նրա ուխտի հավատարմությունը և հաստատուն սերը
3. Ով Փրկիչ – BDB 446, *Hiphil* ԴԵՐԲԱՅ, այսինքն՝ մեկը որ փրկում է, տես՝ Սաղմ. 106:7, 21
4. ապաստարան – BDB 340, *Qal* ԴԵՐԲԱՅ, ՅԱՀՎԵՆ է հզոր ու անառիկ ամրոցը այն մարդկանց համար, ովքեր ապաստարան են գտնում Իր մեջ, տես՝ Սաղմ. 5:11, 18:2:

❖ «**Քո աջ ձեռքով**» Այս արտահայտությունը կարելի է հասկանալ մի քանի իմաստով:

1. մի վայր, որը մոտ է ՅԱՀՎԵԻՆ, որտեղ կարիքավորը գտնում է ապաստան, տես՝ NASB, TEV
2. այն միջոցը, որով ՅԱՀՎԵՆ ազատում է կարիքավորին (այսինքն՝ Նրա զորավոր աջ ձեռքը, տես՝ NKJV, JPSOA, REB, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌ-Ը)
3. սերտ համագործակցությունը սաղմոսերգուի և իր հակառակորդների միջև (այսինքն՝ մտերիմ համագործակիցներ, տես՝ NRSV)

17:9 «ամբարիշտները» Դժվար է այս խմբին նկարագրելը: Այն կարող է վերաբերել՝

1. ուխտի բաժնեկիցներին, որոնք իրենց սեփական նպատակներով հարձակվում են սաղմոսերգուի վրա:
2. ուխտի բաժնեկիցներին, որոնք գիտակցաբար խախտում են ՅԱՀՎԵԻ ուխտը
3. շրջապատող ազգերը, որոնք տգիտությամբ, կուրորեն հետևում են կուռքերին և ոչ թե ՅԱՀՎԵԻՆ

Միայն Սաղմոսի համատեքստը և տվյալ պարբերությունը կարող է օգնել հասկանալ նկարագրությունը: Ես համոզված չեմ «ամբարիշտները» գիտակցում են, որ իրենք այսպիսին են: Հաճախ նրանք կարծում են, թե ծառայում են Աստծուն իրենց գործողություններով:

Այս Սաղմոսում նրանք կարծես թե հարուստ, հաջողակ իսրայելացիներ են, որոնք իրենց ունեցվածքն ու երեխաները համարում են Աստծո կողմից ընդունված լինելու ուխտի նշան:

17:11 «հիմա չորս կողմով պատել են մեզ» MT տալիս է ԲԱՅԸ (BDB 685, KB 738) որպես ԵՉԱԿԻ, սակայն այն համադրվում է հաջորդող տողի հետ ՀՈԳՆԱԿԻ ԲԱՅՈՎ: Այսպիսով Մագորեթիկ գիտնականները տեղադրել են լուսանցքային գրառում (*Qere*), որով առաջարկում են, որ այն կարդա որպես ՀՈԳՆԱԿԻ (տես՝ NASB «մեզ»՝ Սաղմ. 17:11-ում, ա և բ տողերը):

Ես կարծում եմ, որ ԵՉԱԿԻ (MT) լավագույնն է: Այս Սաղմոսը անհատական ողբ է, սակայն հետագայում սկսել է կիրառվել որպես պատարագ ամբողջ համայնքի համար, որը ընդունված է Սաղմոսներում:

NASB, NKJV	«մեր քայլերը»
NRSV	«նրանք հետևում են ինձ»
NJB	«նրանք առաջ են գնում»

Սաղմ. 17:11-ի երբայերենը սկսվում է «մեր քայլերը» (BDB 81, ԻԳԱԿԱՆ ՀՈԳՆԱԿԻ, 11778), սակայն ձայնավորները փոխելով այն կարող է դառնալ ԲԱՅ՝ «առաջ գնալ» (BDB 80, 778), որը միայն մեկ երբայերեն ձեռագրում է, տես՝ NRSV, NJB:

NASB	«որ մեզ գետինը նետեն»
NKJV	«խոնարհեցնեն մինչև հողը»
NRSV	«ինձ գետինը նետեն»
TEV	«ինձ ցածրացնեն»
NJB	«ինձ գետնին շարտեն»
LXX	«մինչև գետինը խոնարհեցնեն»
Peshitta	«հողի մեջ թաղեն ինձ»

ԲԱՅԱԿԱՆ «նետել» (*Qal*, ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ) տառացի «թեքել, խոնարհել» (BDB 639, KB 692) ԲԱՅՆ է, որը կիրառվում է Սաղմ. 17:6-ում, սակայն այստեղ այդ թարգմանությունը չի համապատասխանում համատեքստին: Հիշե՛ք, որ բառերը իմաստ ունեն միայն համատեքստի մեջ: Պոեզիան հարկադրում է, որ բառերը գործածվեն յուրահատուկ կերպերով:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 17:13-15
¹³Ելի՛ր, ո՛վ ՏԵՐ, նրա առաջն ա՛ռ,
 Նրան գետնի՛ն տապալիր,
 Զո սրով փրկի՛ր իմ անձն ամբարիշտներից,

**14 Քո ձեռքով՝ այն մարդկանցից, ո՛վ ՏԵՐ,
Աշխարհի այն մարդկանցից, որոնց բաժինն այս կյանքում է.
Դու նրանց ոսկորները Քո գանձերով ես լցնում.
Նրանց որդիներն էլ են կշտանում
Ու իրենցից ավելացածը իրենց երեխաներին են թողնում:
15 Իսկ ես արդարությամբ տեսնելու եմ Քո երեսը,
Երբ արթնանամ, Քո մնանողությամբ եմ կշտանալու:**

17:13-15 Սաղմոսերգուն կանչում է Աստծուն, որ գործի իր համար (Սաղմ. 17:13)

1. ելի՛ր – BDB 877, KB 1086, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. առաջն ա՛ռ – BDB 869, KB 1086, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. գետնի՛ն տապալիր – BDB 502, KB 499, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. փրկի՛ր – BDB 812, KB 930, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

Ուշադրություն դարձրեք ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈՒՆՎԻ «-ից» ածանցները, որոնք բնութագրում են հակառակորդներին (Սաղմ. 17:13բ-14):

1. ամբարիշտներից
2. մարդկանցից (NET Աստվածաշունչ /Էջ՝ 876, #32/ շտկում է «նրանցից, որ սպանում են», այսինքն՝ «մարդասպաններ», երկու մասում էլ):
 - ա. որոնց բաժինն այս կյանքում է՝ աշխարհից
 - բ. որոնց ստամոքսը լիքն է
 - գ. որոնք շատ երեխաներ ունեն
 - դ. որոնք իրենց հարստությունը թողնում են իրենց երեխաներին

Սակայն սաղմոսերգուն բնութագրվում է որպես՝

1. մեկը, որ փնտրում է Աստծո երեսը արդարությամբ (մտերմության դարձվածք, տես՝ Սաղմ. 11:7)
2. մեկը, որ հագնում՝ կշտանում է Աստծո ներկայությամբ (տես՝ Սաղմ. 16:11)
Սաղմ. 17:15-ի երկու ԲԱՅԵՐՆ էլ ԸՂՁԱԿԱՆ են:
 1. տեսնել – BDB 302, KB 301, *Qal* ԱՆԿԱՏԱՐ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
 2. կշտանալ – BDB 959, KB 1302, *Qal* ԸՂՁԱԿԱՆ

17:15 Ինչպես որ ամբարիշտները (և նրանց սերունդները, ժառանգները) կշտանում են (BDB 959, KB 1302, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) երկրավոր բաներով, անագնիվ ճանապարհներով ձեռք բերված շահույթով, սաղմոսերգուն էլ (անձնական՝ «Ես») կշտանում է (BDB 959, KB 1302) ՅԱՀՎԵԻ ներկայությամբ:

❖ «**երբ արթնանամ**» Այս ԲԱՅԸ (BDB 884, KB 1098, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱՉՄՈՒԹՅՈՒՆ) կիրառվում է մի քանի իմաստով:

1. արթնանալ Աստծո հատուկ տեսիլքով
2. արթնանալ գիշերվա քնից
3. արթնանալ հարբած վիճակից
4. արթնանալ մահից

Կարծում եմ #4 տարբերակը ամենահարմարն է այս համատեքստում (այսինքն՝ ՅԱՀՎԵԻ ներկայությունը, տես՝ 4 Թագ. 4:31, Հոր 14:12, Սաղմ. 139:18, Ես. 26:19, Երեմ. 51:39, 57, Դան. 12:2): Եթե այդպես է, ապա Սաղմոս 16 և Սաղմոս 17-ի վերջաբանները նույնն են:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչպե՞ս վարվեց ՅԱՀՎԵՆ սաղմոսերգուի անմեղության հայտարարության հետ:
2. Ինչպե՞ս է սաղմոսերգուն հայտարարում, որ ինքը անմեղ է:
3. Բացատրե՛ք «Քո աջ կողմում» պատկերավոր խոսքը:
4. Բացատրե՛ք «այքի բիր» պատկերավոր խոսքը:
5. Բացատրե՛ք «Քո թևերի հովանու ներքո» պատկերավոր խոսքը: